ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

N 206
23 հուլիս 2021թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2021թվականի հուլիսի 22-ի թիվ N 40-Ա և N 41-Ա որոշումները:

Առդիր ՝3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 40-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշումը,ինչպես նաև քաղաքացի Սոնիկ Ստեփանյանի դրմումը՝

որոշում եմ

1.Քաղաքացիներ Սոնիկ Վասակի Ստեփանյանին,Արմենակ Սարգսի Ստեփանյանին,Համազասպ Արմենակի Ստեփանյանին,Արթուր Արմենակի Ստեփանյանին,Սարգիս Արմենակի Ստեփանյանին՝ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հացավան համայնքի 07-041-121-012 կադաստրային ծածկագրով գյուղ.նշ.վարելահողի վրա տալ տնտեսական շինության կառուցման շինարարության թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոնիկ Վասակի Ստեփանյանին,Արմենակ Սարգսի Ստեփանյանին,Համազասպ Արմենակի Ստեփանյանին,Արթուր Արմենակի Ստեփանյանին և Սարգիս Արմենակի Ստեփանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2021 թ. հուլիսի 22
գ.Հացավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 41-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հացավանի համայնքապետարան է դիմել քաղաքացի Նելլիկ Աղասու Միքայելյանը՝սեփականության իրավունքով իրեն պատկանող Հացավան համայքնում գտնվող 07-041-0111-0013 կադաստրային համարի 2.05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից,ընդլայնման նպատակով,ուղղակի վաճառքի ձևով Նելլիկ Աղասու Միքայելյանին օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 07-041-0111-0012 կադաստրային համարի վարելահողը՝1.75621 հա մակերեսով և 07-041-0103-0006 կադաստրային համարի 9.75346 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքին կից,ընդլայնման նպատակով,ուղղակի վաճառքի ձևով Նելլիկ Աղասու Միքայելյանին օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող 07-041-0103-0010 կադաստրային համարի այլ հողատեսքը՝0.16829 հա մակերեսով (հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ՝N 29062020,տրված 29-ը հունիսի 2020թ.,N 18102017-07-0040 տրված 18-ը հոկտեմբերի 2017թ.,N 17062020-07-0121 տրված 17-ը հունիսի 2020թ. և N 06072020-07-0095 տրված 6-ը հուլիսի 2020թ.)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագնու 2020թվականի հուլիսի 09-ի թիվ 22-Ա որոշումը.

որոշում եմ

1.Նելլիկ Աղասու Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող Հացավան համայնքում գտնվող 07-041-0111-0013 կադաստրային համարի 2.05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից,համայնքային սեփականություն հանդիսացող 07-041-0111-0012 կադաստրային համարի վարելահողը՝1.75621 հա մակերեսով,ընդլայնման նպատակով,ուղղակի վաճառքի ձևով օտարել Նելլիկ Աղասու Միքայելյանին՝կադաստրային արժեքով և 07-041-0103-0006 կադաստրային համարի 9.75346 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքին կից,հայայնքային սեփականություն հանդիսացող 07-041-01030010 կադաստրային համարի այլ հողատեսքը՝016829 հա մակերեսով,ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարել Նելլիկ Աղասու Միքայելյանին՝կադաստրային արժեքով:

2.Սահմանել,որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո,15-օրյա ժամկետում Հացավան համայնքի բյուջեի N 900105220173 հաշվին պետք է վճարի 07-041-0111-0012 հողամասի կադաստրային արժեքը,որը կազմում է 685 000(վեցհարյուր ուսուն հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և 07-041-0103-0010 հողամասի կադաստրային արժեքը,որը կազմում է 11 500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանել,որ սույն որոշման ընդունումից հետո,հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանին՝հողօգտագործողի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի վճարումից հետո 10-օրյա ժամկետում հողօգտագործողի հետ կնքելու հողամասի առքուվաճառքի պայմանագիր:

5.Ընդունել ի գիտություն,որ առուվաճառքի պայմանագիրց ծագող իրավունքը ենթական է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ալվարդ Խաչատրյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝Նելլիկ Աղասու Միքայելյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 21թ. հուլիսի 22
գ.Հացավան